

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԼԵԶՈՒՆ

(Տես թաղամաշ 1920 էջ 219)

Արուեստակութեան Ախտը.

Գէշ խօսելու երկու կերպ կայ, աղաւաղում և արուեստակութիւն: Բայց վերջինս՝ առաջինէն չարագոյն է, վասն զի ո՛վ որ գէշ կը խօսի՝ միայն ծիծաղելի է, մինչդեռ արուեստակութեամբ խօսողը թէ՛ ծիծաղելի է և թէ՛ անտանելի, Հարկ չկայ բացատրելու թէ ի՞նչ է արուեստակութիւնը: Արդէն շատ առածի տարաքեր կան որով զայն կը ծաղրենք. ինչպէս, պատառաքաղին ծայրով խօսիլ, ապաքենի, հետևաբարի վրայ քաշիլ. — տպուած գրքի պէս խօսիլ. — իմաստակութեան և նազանքի խառնուրդ մ'է: Սովորութիւն մը՝ ընդհանրապէս լեզուի մէջ ամենէն աւելի քիչ գործածական ձևերն ընտրելու, կարծելով որ լաւ խօսիլը՝ ուրիշներէն տարբեր կերպով ըսելուն մէջ կը կայանայ. սովորութիւն մը՝ բանաւ տեղծական իմաստներ և բացատրութիւններ գործածելու նաև ընտանեկան լեզուի մէջ՝ ամենապարզ և սովորական բան մ'իսկ բացատրելու ժամանակ, և զրական ծաղկեալ ոճի բացատրութիւնները գործածելու՝ կրթութիւն և ազնուականութիւն ցոյց տալու համար, փոխանակ գործածելու համայնածանօթ ու սովորական բացատրութիւններ՝ որոնք իբրև ռասմաբանութիւն կ'արամարտօին, և ռասմական կ'երևան միայն որովհետև ամէնքը չեն գիտեր:

Տեսած չեմ բնաւ պչրասէր երիտասարդներ որոնք միշտ շնորհալի բերան մը կ'ուզեն ցոյց տալ և կարծես ամէն վայրկեան ժպիտ մը կայ իրենց դէմքին վրայ, կամ բերանին միշտ բաց կը թողուն ճերմակ ակոսներ ցոյց տալու համար, որ Ապողոնեան դիրքեր կ'առնուն և արմուկներն կուշտեորուն վրայ սեղմած շարժումներ կ'ընեն և ոտներուն ծայրով կը քալեն՝ քաղերու պէս երերալով և չորս կողմերին նայելով՝ երբեք կիսափակ,

մերթ բաց և երբեք նուաղկոտ աչքերով: Հակակերելի և ծիծաղաշարժ ծաղրանկարներ են, այնպէս չէ՛: Ճիշտ նոյն արդիւնքն առաջ կը բերեն անոնք ալ՝ որ արուեստակերպով կերպով կը խօսին: Մեզի անհաճոյ կ'անցնին, վասն զի մեզմէ տարբեր խօսելով, կերպով մը կ'իմացնեն թէ մենք գէշ կը խօսինք և թէ իրենց պէս պէտք ենք խօսիլ: Անկեղծ չեն երևնար. մեզի, որովհետև անկեղծութիւնը պարզ խօսելուն մէջ կը կայանայ, մինչդեռ իրենք արուեստակութեամբ կը խօսին. և մենք չենք կրնար լուրջ նկատել զիրենք, որովհետև լեզուն այնչափ մանր կրկնելով՝ կը ցուցնեն թէ աւելի կարևորութիւն կու տան բառերուն քան իրաց, կը խօսին՝ պարզապէս ցուցնելու համար թէ լաւ կը խօսին:

Ուշ գիր: Եթէ մէկը բարեկամիդ մահը քեզի գուժէ ըսելով. — երէկ երկայն և ցաւագին հիւանդութենէ մը վերջ, այն ինչը մեռաւ, ո՛վ իմ սիրելի բարեկամս, մեռաւ իմ բազուկներուս մէջ, վերջին խօսքերն եղան՝ յանձնել ինձի իր խեղճ տղային՝ որ անկողնոյն ջուղ կեցած կու լային. — չեմ զգացուիր: Բայց եթէ ընդհակառակ, ըսէ. — երէկ, յետ երկայն և չարալուծ օրհասի մը, փոխեցաւ ի մահաւանցու կենցաղոյս, ո՞նի այս ինչ անուն, ո՛վ իմ ցանկալի բարեկամս, իմ կուրծիս վրայ աւանդեց իր վերջին շունչը, և իր վերջին վանկերն եղան յանձնարարել իմ խնամոցս իր եղկելի որդիքը, որոնք անարին ջուղ կանգուն՝ ազի արցունքներու մէջ կը թանային: Դու այս ճոռած ձևերը լսելով, կարծեմ փոխանակ յուզուելու՝ չես հաւատար իր ցաւին ու վրան կը խնդաս:

Արուեստակութիւնը՝ ամէն սիրալիլ արատայատութիւն կ'եղծանէ, ազդեցութիւնը կը կտորէ, իմաստին ուժը կը տկարացնէ ճշմարտութիւնը կը սքօղէ, մտերմութիւնը կը ցրտացնէ, ամէն բանի վրայ ծիծաղական բան մը կը ձգէ, ձանձրանալի, ան տանելի և մերթ նոյն իսկ առեկի կ'ընէ՝ կեղծ երևոյթի մը տակ ներկայացնելով մտքի ու սրտի սքանչելի յատկութիւններով օժտուած անձինք: Մեծ թերութիւն մ'է

արուեստակութիւնը, և վա՛յ որ անով կը վարակուի. որովհետեւ իրեն մէջ իրեւ երկրորդ բնութիւն մը կ'ըլլայ, որուն պատճառաւ իր գիտակցութիւնը կը կորսնցընէ և իր բոլոր կենաց մէջ չկրնար այլ ևս անոր ձեռքէն պրծիլ: Ողբարէ թերութիւն մ'է՛ գոր աշխարհ կը ծաղրածէ ու կը պախարակէ, միշտ անկարեկից, նոյն իսկ պատուաւոր անձանց վրայ՝ մինչև ցմահ:

* *

Այս ծիծաղական և ծայրայեղ արուեստակութեան մէջ ինչալու վտանգէն զերծ ես զու: Բայց պէտք ես նաեւ իմաստակութեան շուքէն փախչիլ, նոյն իսկ այն թերութենէն՝ որուն մէջ ամէնքնիս կիշնանք՝ գործածելով շատ մը բաներ և բացատրութիւններ որ խօսուած լեզուին յատուկ չեն, և վարժած չենք զանազանութիւն ղնելու անոնց և սովորական բացատրութեանց մէջ զորս գիտենք ու յաճախ կը զործածենք: Այդպիսի բաներու և բացատրութեանց կատարեալ ցանկ մը չեմ կրնար քեզի ներկայացնել, վասն զի չափազանց երկայն կ'ըլլայ. սակայն խօսակցութեան մը մէջ քեզի քանի մ'օրինակներ կու տամ. Գրիգոր իր մէկ դէպքը պիտի պատմէ, իսկ Ես բնականութեան իմաստակութիւնը պիտի ընեմ իր մատենագրական ծաղիկներուն վրայ:

ԱՐՈՒԵՍՏԱԿԵԱԼ ԽՕՍՈՂՆ ՈՒ ԲՆԱԿԱՆ ԽՕՍՈՂԸ

Գրիգոր. — Երկու կից ճանապարհնեւրու բերանը ժամանելով, պահ մը կանգ առի, խորհելով թէ ո՛ւր պէտք է քայլերս ուղղեմ, դէպ ի ա՛յլ թէ՛ դէպ ի ձախ:

Ես. — Ներեցէ՛ք, Պարոն: Ես պիտի ըսէի՝ Երկու կից ճամբու բերանը հասնելով, տարակուսեցայ թէ ուսկից երթամ, ալէ՛ն թէ ձախէն:

Գ. — ... ուր պէտք է քայլերս ուղղեմ, դէպ ի ա՛յլ թէ՛ դէպ ի ձախ: Կանգ առի, ակընկալելով հանդիպելու ուղևորի

մը՝ ուսկից կարող լինէի ա՛յն տեղեկութիւններն առնուլ որ ինձ հարկաւոր էին...

Ես. — Ակընկալելով՝ Չէ՛ք կրնար ըսել, սպասելով հանդիպելու մէկու մը... կամ պարզապէս, սպասելով մէկու մը՝ որուն յիտակ ձամբան հարցնեմ:

Գ. — Բայց չնշմարելով ո՛ր և է բանաւոր մը...

Ես. — Չտեսնելով մարդ մը...

Գ. — Հակեցայ դէպ ի ա՛յլ և յառաջեցի մինչև եկեղեցեակ մը՝ շրջաբոլոր նոճիներով. և յիշողութեանս մէջ արթնեցաւ. սա զգացումը, թէ հայրս ճառած էր անոնց վրայ, երբ օր մը ինձ կը պատմէր զդեակին շուրջ կատարած իր մէկ պտոյտը... Հոս ալ կը գտնեմ սրբազրեւու բան մը:

Ես. — Հինգ բան: Հակեցայի տեղ՝ դարձայ. յառաջեցի տեղ՝ ձամբաս շարունակեցի. շրջաբոլորի տեղ՝ շրջապատուած. յիշողութեանս մէջ արթնցաւ ի տեղ՝ յիշեցի. ինձ ձառած էր ի տեղ՝ խօսած էր, կը հաճէր շարունակել, պարոն:

Գ. — Ընդհանուր նշմարեցի երկու մարդիկ՝ դիմաւալ գետին պտուկած...

Ես. — Ա՛հ, այդ մըչափ կը սիրես նշմարել բառը. ընդհանուր տեղ՝ հոն չեմ կրնար ըսել. և դիարաւայի տեղ՝ գետին պտուկած կամ փռուած:

Գ. — ... Որ կը թուէին նիրհել:

Ես. — Որ կարծես կը քնանային, եթէ չափազանց սովորական չես գտնել:

Գ. — Տեղս արձանացայ...

Ես. — Կեցայ... կանգ առի:

Գ. — ... Եւ գննելով գիրները, կասկած ունեցայ, թէ մի՛ գուցէ կեղծիք մ'ըլլար այդ երեւոյթին տակ. և ստուգել չէին նիրհել: Ենթադրութիւնս ստույգ կը թուէր...

Ես. — Ո՛հ, ինչ լաւ կը խօսեր: Կասկածեցայ եթէ ըսէիք՝ շատ սովորական բան մ'ըսած պիտի ըլլայիք: Բայց կը խոստովանիմ որ, կեղծիք մ'ըլլար այդ երեւոյթին տակ բացատրութիւնը՝ աւելի ազնուական է քան եթէ ըսէիք. մի՛ գուցէ խարխալ յոյսիս մ'ըլլար:

Գ. — Պարոն, ուրեմն զիս ծաղրաբա-
նե՛կ կ'ուզէ՞ք:

Ես. — Աստուած մի՛ արագէ, փար-
ջանո՛ւ: Ո՛հ, ինչպէս կարող էք ապեհա-
կանել այդպիսի մտածութիւն մը: Օ՛ն անդր,
յառաջ:

Գ. — Յանկարծուտ, արդարեւ, զրեւ'
թէ իսկոյն երկուքն ևս ուշաբերուեցան
և անոնցմէ մին...

Ես. — Վայրկեան մը, խնդրեմ: Ժա-
մանակ տո՛ւր որ քիչ մը զարմանամ սա
յանկարծաստին վրայ՝ փորձանակ յանկար-
ծակ/ի, և ուշաբերուեցան՝ փոխանակ արբըն-
ցանի: Ասիկայ խօսիլ չէ այլ բարբառել:
Շարունակեցէ՛ք, եւ անոնցմէ մին...

Գ. — (Կ'ըմբռնեմ)... Եւ անոնցմէ մին,
քաղաքավար շեշտով՝ որ այնքան չէր ներ-
դաշնակուել իր գծազրուիթեան արտայայ-
տութեան հետ, ինձ ըսաւ. — Եթէ ասկից
կ'ընթանաք դղեակն ի վեր բարձրանալու
համար, վրիպակի մէջ էք. այժմ՝ զանգ
կ'ուղղենք դէպ ի ճշմարիտ ճանապարհը:

Ես. — Ներէ՛, Հոս, թէ՛ն ըսածիդ վրայ
գմայլեր ես, բայց, ինձի աւելի բնական
կ'երևնայ ըսելը քաղաքավար ձայնով՝ որ
չի համաձայներ դէմքի արտայայտութեան
հետ: Այն, անոնցմէ մին, ըսած պիտի ըլլայ,
երբայ, ոչ թէ ի վեր բարձրանալ. վրի-
պակի մէջ էք ըսած պիտի չըլլայ, այլ
կը սխալիք. այժմ՝ զանգ կ'ուղղեն դէպի ճշմա-
րիտ ճանապարհի տեղ՝ հիմայ քեզի յի-
տակ ձառքան ցոյց կու տանք ըսած պիտի
ըլլայ:

Գ. — (Այս ինչ անտանելի ճննադատ
է). Այս ըսելով վեր կանգնեցան երկուքն,
և սկսան դէպ առ իս...

Ես. — Հիանալի բան. ծափահարու-
թեան արժանի: Բայց, ես պիտի ըսէի:
Այս լսելով ոտքի ելան և իմ կողմն սկսան
գայ. բայց, չկը իտաստովանիմ, որ քեզի չափ
նուրբ և վայելուչ կերպով խօսած պիտի
չըլլայի:

Գ. — Կասկածներ ծնան մտքիս մէջ, և
ընկրկեցայ: Անոնք իրենց քայլերն շտա-
պեցին: Աներկբայելի էր ուրեմն, թէ դի-
տում ունէին իմ վրաս յարձակողական

դիրք բռնելու: Աղտ կերպով կրնաք երեւ-
կայել իմ սարսափս: Ուզեցի աղաղակ
արձակել, բայց ձայնս նուաղեցաւ: Ուզեցի
փախուստի դիմել, բայց ի գո՛ւր էր. զգացի
որ մին թիկունքս ամրապինդ բռնեց.
հարկէն ստիպուած կանգնեցայ:

Ես. — Ես ալ քեզի վայրկեան մը
կանգ առնել կու տամ, դիտել տալու հա-
մար, թէ չափազանց աղուոր կը խօսիս:
Կրնայիր ըսել աւելի համեստ կերպով և
ձեռով. — Ետ քաղեցայ: Անոնք նրազե-
ցին իրենց քայլերը: Անտարակոյս կ'ուզէին
վրաս յարձակիլ: Կրնաք երևակայել զգացած
վախս: Աղաղակել ուզեցի՝ ձայնս խղիւղեցաւ:
Ուզեցի փախլիլ բայց ի գո՛ւր: Եւ յետոյ:

Գ. — Յայնժամ աղաղակեցի. բարեւ,
բախտաբար շրջակայ վայրէն կ'անցնէր
այն պահուն գեղջուկներու երամ մը՝ զորս
եղեռնագործները չէին նշմարած, վասն զի
ծառերէն կը սքողուէին:

Ես. — Շո՛ւնչ մ'առ, մարդ Աստուծոյ:
Բայց ինչու երամ՝ խոսքի տեղ, սքողել՝
ծածկելու տեղ, գեղջուկ՝ գիշացոյ տեղ,
յրջակայ վայրէն՝ մօտ տեղերէն ըսել...

Գ. — Անոնք իսկոյն դէպ ի աղաղակը
խուժեցին:

Ես. — Ըսել կ'ուզեաւ անշուշտ՝ օգնո-
րեան վազեցին:

Գ. — Ոճրագործները փարատեցան...

Ես. — Ինչպէս հովը մառախաղը:

Գ. — Ես փրկուեցայ, և իսկոյն մտա-
բերեցի, թէ մի՛ գուցէ քսակ տարափոխուած
ըլլայ զդպանէս. բայց արդէն շատ նիհար
էր նա, և անոր վրայ ճառելու աշխա-
տանքը անոր արժանիքը չարժեր: Ամե-
նաշարագոյնը՝ զգացած սարսափս էր զոր
կ'անգիտանամ խօսքով նկարել քեզի:

— Ես. Ո՛հ, հիմայ հասկեցայ. խօսքով
նկարել ըսելով՝ կը հասկնաս անշուշտ խօս-
քով բացատրել կամ նկարագրել: Բայց
ինչու դժուար բացատրութիւնները շատ կը
սիրես, և չես ըսեր պարզապէս՝ վտանգեմ
ազատեցայ, և վախեցայ որ քսակս գրգռեմ
գողցած ըլլան: Բայց արդէն շատ դրամ
չկար մէջը, անոր համար վրան խօսիլ ան-
գամ չարժեր: Կրած վնասս միայն վախս էր

զոր խօսքով քաջատարն էր և նկարագրել շատ
դժուար է:

Գ. — Ուրեմն, քանի որ մեծ վտանգի
մը չենթարկուեցայ, ինչ աստիճանն երախ-
տընկալ... ըլլալու եմ...

Ես. — Բաւական է որ երախտագետ
ըլլաս...

Գ. — ...ան բարի գեղջուկներուն: Բայց
այն երեկոյին ջերմ մը յարձակեցաւ վրաս:

Ես. — Ետեանկեցաւ... վրադ:

Գ. — Ջերմ մը գին կալանաւորեց,
կոնակաւ ելաւ, վիզ փաթթուեցաւ, ինչ-
պէս որ կ'ուզես: Եւ կամ վրաս եկաւ...
ինծի հետեւեցաւ, վասն զի հօրս խրատը
առաթուր ըրեր էի...

Ես. — Մ'արդ Աստուծոյ, չերմ մը
բռնեց ըսէ լմնցուր: Երանի թէ ըսէիր, հօրս
խօսքը մտիկ չէի ըրած կամ հօրս խօսքին
ականջ չկախեցի:

Գ. — Որ ըսած էր, թէ շատ հանճա-
րեղութիւն չէ՝ զքօսանքի հետամուտ ըլլալ
այդ վայրերուն մէջ՝ առանց համախումբ
ընկերութեան, յետ այսու միշտ պիտի վեր-
յիշեմ զայդ:

Ես. — Հայրդ ըսած պիտի ըլլայ՝
խոնճաւորեմ չեմ միայնակ այդպիսի տեղեր
պտոյտի ելնել. և լաւ կ'ընես եթէ այսու-
հետեւ միշտ յիշես՝ ոչ թէ յետ այսու: Եւ
շատ աւելի լաւ ըրած կ'ըլլաս, եթէ այսու-
հետեւ բոլորովին տարբեր կերպով մը
խօսիս:

Գ. — Բայց, դո՛ւն ալ շատ զարմ...
կարծեմ թէ տոնաւոր սխալ մը չըրի:

Ես. — Ո՛չ. միայն թէ բոլոր խօսածդ
վերէն վար աններդաշնակութիւն մ'էր,
խօսեցիւր և բառերու կոյտ մը. բացատրու-
թիւններ՝ զոր ճաշակով և բնական կերպով
խօսող մը չի գործածեր, և որոնք սխալի
չափ անհաւոյ են և քու անսխալ խօսակ-
ցութիւնդ այնչափ ծաղրական կ'ընեն՝ որ-
չափ սխալներով լեցուն խօսակցութիւնդ:
Տոնոնք ալ քեզի պարզէ:

Գ. — Չափազանց ազնիւ էք. շնորհա-
կա՛ւ եմ:

Ես. — Չեմ արժանի. բայց մի՛ առա-
քոյր արկանէք իմ խորհուրդներս: Եթէ

խորհուրդներուս հետեւիք յայսմեան միշտ
պիտի մնաք և ինծի երախտագէտ: Թարգա-
նօք և հրաժեշտի ողորմիւ եմ... Փոյոյ:

Գ. — Անտանելի՛ մարդ:

Ուրիշ դեռ շատ օրինակներ կ'ընայի
մէջ բերել արուեստագէտն խօսելու մա-
սին, բայց դուն ինքնին պիտի ընես՝
խօսակցելով յարգելի տիկնոջ մը հետ՝ զոր
այժմ պատիւ ունիմ քեզի ներկայացնելու:

(Շարունակելի) Թրգ. Թորն. Հ. Ա. ՅՈՎՍ.

ԱՆՁՐԵՒՈՏՈՐ

□ □

Քիւերուն տակ ճնճուկներ ծոյլ կը շարունին,
լճու կտուցով քըթուկով մեղկ պորտերին,
Երբ այերէն փոխան շառայլ արեի,
Յճյլ ու տրտում անձերը վար կը մաղուի...

Օղակ-օղակ կը ծփծփայլ լըճակն հեզ,
Տարափ մ'արծաթ մանեակներու է կարծես,
Ջուրին երեսն կաթիլներու թափթըփուկ,
Ու վտակը կ'ըլլայ շղթայ մը հեղուկ...

Երեկոյին կանթեղներն ալ կը վառին,
Արծարծելու խինդ ու խայտանք թիթեռին,
Պատուհանէն խոնաւ մութին գիրկը զով,
Հիւանդ լոյսի գիրդ փնջիկներ թափելով...

Ազօտ լոյսին շաղուած շիթերն անձրին,
Լոյսի կաթիլ կ'ըլլան ու վար կը մաղուին. —
Լոյսի՛, որուն մէջ ցայգուն ցօղն մերթ խաղայ
Բանուածք մ'հեղուկ ուղունքներով շափիւղայ...

✽

Իշխի, անձրեւ, խորհրդաւոր ես դուն միշտ,
Հայլիացումն իմ յոյզերու բազմափնտ...
Անձրեւ օր մ'է արդէն ամբողջ կեսեքն այս սին. —
Հէք աչքերուս արցունքներն երբ կը պակսին...

Ֆրէզմօ, Քալիֆորնիա ԱՐԱՄ Մ. ԱՐԱՄԵԱՆ
(Ամերիկայ)

✽ ✽